ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի
ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ապրիլի 28-ին ժամը 15:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երրորդ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 18 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գ. Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2023 թվականի ապրիլի 28-ի երրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 30 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի 2023 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Ռուբիկ Ենոքյան:

Ռուբիկ Ենքոյան: Ծախսերին վերադառնալով, մասնավորապես կապիտալ շինարարական ծախսրի մասով 300 միլիոն, ի՞նչ նպատակով է ծախսվել:

Պատասխանեց Լ.Քալաշյանը: Փոխանցումները կատարվել են 2022 թվականի կիսատ մնացած կապիտալ շինարարությունների համար, մասնավորապես՝ փողոցների և մաթյերի հիմնանորոգման համար:

Ռուբիկ Ենքոյան: Կապիտալ նորոգում 282 միլիոն 958 հազար, սա նախատեսված է քաղաքապետարանի վերանորոգման համար:

Պատասխանեց Լ.Քալաշյանը: Ոչ, քանի որ կառավարության պահանջով սուբվենցիոն ծրագրերը ենթակա ՀՈԱԿ-ների մասով իրականացնելու համար անհրաժեշտ է իրականացնել աշխատակազմով, դրա մեջ ներառված է թիվ 14 մանկապարտեզի շինարարությունը և Ոսկեհատ բնակավայրի մանկապարտեզի շինարարությունը:

Ռուբիկ Ենքոյան:Մեկ հարց ևս. վարչական սարքավորումները 15 միլիոն ի՞նչ նպատակով է նախատեսված:

Պատասխանեց Լ.Քալաշյանը: Նախատեսված է մասնավորապես ձեռք բերել տեսախցիկներ, գրասենյակային գույք, համայնքապետարանի համար համակարգչային տեխնիկա և ֆոտոխցիկ:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 31 որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Կարեն Սմբատյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 32-Ն որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Կարեն Սմբատյանը:

Ներկայացրեց Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 33-Ն որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացրեց «Բարեկարգում» տնօրինություն բյուջետային հիմնարկի տնօրեն նշանակելու մասին որոշման նախագիծը: Գրիգոր Հարությունյանը ներկայացրեց նաև տնօրենի թեկնածու Մամիկոն Աբրահամյանի ինքնակենսագրությունը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 34 որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացրեց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 35 որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացրեց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 36 որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հ հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացրեց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 37 որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 38 որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացրեց Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանն անհատույց օտարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 39 որոշումը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող հողամասն օտարելու համար համաձայնություն տալու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 41 որոշումը:

Օրակարգի 11-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 18 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 42 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: